Երկրորդ անգամ

ՀՀ ԳԱԱ-ում կմեկնարկեն նախագահի ընտրությունները. ներկայիս Ռադիկ Մարտիրոսյանի լիազորություններն ավարտվում են մայիսին: Մինչդեռ՝ ԳԱԱ-ում կան ակադեմիկոսներ, ովքեր չեն ցանկանում երկրորդ անգամ Մարտիրոսյանին տեսնել ԳԱԱ նախագահի պաշտոնում և ընտրություններին իրենց ձայնը չեն տա այդ ակադեմիկոսին: Սակայն, ինչպես ասում են, պարզվում է, հնից լավը չկա, և ՀՀ նախագահական նստավայրից հանձնարարական կիջեցվի՝ Ռադիկ Մարտիրոսյանին ևս մեկ անգամ ԳԱԱ նախագահի պաշտոնում նշանակելու մասին: Բանն այն է, որ Հայաստանի իշխող կուսակցության՝ ՀՀԿ-ի նախընտրական շտաբը սովորաբար հենց ԳԱԱ նախագահության շենքն է դառնում, որտեղից էլ կազմակերպվում են ՀՀ խորհրդարանական ու նախագահական ընտրությունները: